ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**<<ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Երևան

_07_ _մայիսի_ _2019թ._
ժամը _10⁰⁰_

Մասնակցությամբ՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | **Սուրեն Հովհաննիսյան** |
| Հանձնաժողովի անդամներ՝ | **Կարինե Բարոյան** |
| | **Սեմյոն Օրդույան** |
| | **Արտեմ Ավետիսյան** |
| | **Նարինե Նավասարդյան** |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | **Պավել Գաբրելյան** |

**1. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին**

1.1 Հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ)՝ www.armeps.am կայքի միջոցով՝ 2019 թվականի մայիսի 03-ին ժամը $10^{00}$-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**2. Տեղեկատվություն գնվելիք ապրանքների գների և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Ապրանքի անվանումը | Ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Սարքածրագրային հավաքածու՝ մարդու մարմնի եռաչափ պատկերի հետ հետ վիրտուալ աշխատանքի համար, ինտերակտիվ անատոմիական սեղան, կարճ | 46000000 |
| 2 | Մարդու անատոմիայի ուսուցման անհրաժեշտ ֆանտոմների և մոդելների լրակազմ | 42500000 |

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Հայտեր ներկայացրած մասնակիցների | | |
|---|---|---|---|
| | անվանումը | էլեկտրոնային փոստի հասցեն | Ստացականի հ/հ |
| 1 | <<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ | armedtechnicallc@gmail.com | 000089589 |
| 2 | <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ | lawyer@c-e.am | 000089607 |
| 3 | <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիում | hgh.company@mail.ru | 000089692 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**3. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտերի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 <<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.3 <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում՝ ներառված բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը (Հավելված N 5), չեն պարունակում վավեր էլեկտրոնային ստորագրություն:

3.4 www.ekeng.am ինտերնետային կայքի Adobe Acrobat Reader DC էլեկտրոնային ստորագրության հավաստագրի վավերականության ստուգման ծրագրով հանձնաժողովի կողմից ստուգվել են ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերը, որի արդյունքում պարզվել է, որ <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերում տեսանելի է էլեկտրոնային թվային ստորագրություն, սակայն հավաստագիրը զետեղված չէ <<Նույնականացման քարտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում է կատարվել <<Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ>> ՓԲԸ-ին, որին ի պատասխան ներկայացվել է գրություն այն մասին, որ ներկայացված փաստաթղթերը չեն պարունակում վավեր էլեկտրոնային ստորագրություն:

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12)-րդ ենթակետի, 40-րդ կետի 4)-րդ ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

## 4. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների մասին

4.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև.

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Մասնակիցների կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| **Չափաբաժին թիվ 1** | | | | |
| 1 | <<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ | 45800000 | 0 | 45800000 |
| 2 | <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիում | 29556666.67 | 5911333.33 | 35468000 |
| **Չափաբաժին թիվ 2** | | | | |
| 1 | <<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ | 42400000 | 0 | 42400000 |
| 2 | <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ | 22000000 | 4400000 | 26400000 |
| 3 | <<Էյջ Ջի Էյջ Քոմփանի>> ՍՊԸ և <<Թեստինգ Սոլյուշնզ>> ՍՊԸ կոնսորցիում | 28316666.67 | 5663333.33 | 33980000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

## 5. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

5.1 Մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին տվյալները ներկայացված են ստորև.

| Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակցի անվանումը | Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| **Չափաբաժին թիվ 1** | | | | |
| 1 | <<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ | 45800000 | 0 | 45800000 |
| **Չափաբաժին թիվ 2** | | | | |
| 1 | <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ | 22000000 | 4400000 | 26400000 |
| 2 | <<Ար.Մեդտեխնիկա>> ՍՊԸ | 42400000 | 0 | 42400000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

## 6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 6.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**7. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | *(ստորագրությունը)* | **Ս. Հովհաննիսյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | *(ստորագրությունը)* | **Կ. Բարոյան** |
| | *(ստորագրությունը)* | **Ս. Օրդոյան** |
| | *(ստորագրությունը)* | **Ա. Ավետիսյան** |
| | *(ստորագրությունը)* | **Ն. Նավասարդյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | *(ստորագրությունը)* | **Պ. Գաբրելյան** |